տի. ով որ կամեցաւ՝ հեծաւ ի վերայ մեր եւ վարեաց մեզ, ուր որ ինքն կամեցաւ, եւ երբեմն դրացիք մեր արարին մեզ իբրեւ չունս որսորդի» (56):

Իսկ որ ամենից գլխաւորն է՝ «ոչ ոք մընաց ի մէնջ ազնիւ յարենէ, այլ ամենեքեան միաբան եւ միախոհ եղաք մշակ այլազգաց, վաստակելով յերեսս երկրին մերոյ իբրեւ անասուն եւ անբան» (33):

Արդ, ի՞նչն է այդ դժոխային կացութեան պատճառը:

Զմոռնանք ամենից առաջ միջանկեալ կերպով նկատել, որ մեր հեղինակի համար հայ ժողովրդից դուրս ուրիշ պատճառներ, այսպէս ասած՝ առարկայական պատճառներ գոյութիւն չունին: Նա անտեսում է, օրինակի համար, Հայաստանի աշխարհագրական դիրքը, որ եղել է հայ ժողովրդի դժբախտութեան մէկ ամենագլխաւոր պատճառը: Նա անտեսում է, որ հին եւ նոր ժամանակների բոլոր աշխարհակալները շարունակ ձգտել են տիրել Հայաստանին, որովհետեւ նա՝ Հայաստանը Եւրոպան Ասիոյ հետ միացնող կամուրջն է եւ իշխում է Եփրատի ու Տիգրիսի մեծ ճանապարհի վրայ. հետեւապէս Հայաստանին տիրելով միայն աշխարհակալները կարող էին ապահովել իրենց տիրապետութիւնը: Նա անտեսում է Հայաստանի մակերեւոյթի լեռնային կազմութիւնը, որ երբեք հնարաւորութիւն չտուեց հայերին միանալու եւ մի պատկառելի ոյժ կազմելու, այլ ընդհակառակը, բաժան-բաժան արաւ եւ թուլացրեց երկիրը:

Այս եւ սրանց նման ծանրակշիռ փաստերն անտես անելով Հայաստանի դժբաղդութեան միակ պատճառը նա որոնում է հայ ժողովրդի կամ աւելի ճիշդ՝ նրա ներքին յատկութիւնների մէջ:

Թէեւ անգլիական լուսաւոր մթնոլորտում ապրած ու մեծացած, բայց դարձեալ նա չի կարողանում բոլորովին ազատագրուել իր դարի եւ իրենից առաջ եղած հայ հեղինակներին յատուկ մտայնութիւնից: Նա էլ փորձում է հայ ժողովրդի դժբախտութիւնը բացատրել իր՝ ժողովրդի մեղքերով, ինչպէս այդ կ'անէր մի Թանահատի կամ մի Շամրի ձորի վարդապետ: Ըստ նրա՝ հայ հողը շաղախուած է արդարների արիւնով. բազմաթիւ անօրէնու-թիւններ են գործուած եւ անթիւ մոռանկներ ու խեղճեր ոտնահարուած: Եւ ուրեմն, մի՞թէ այդ ամէնի համար չպէտք է մեզ վրայ բարկանար Աստուած ու չպատժէր մեզ — այսպէս է մտածում նա:

Բայց հայ ժողովրդի թշուառութեան խակական եւ գլխաւոր պատճառը օրէնքի, հաստատուն կարգերի բացակայութիւնն է կամ — ինչպէս ինքն է անուանում — անկարգութիւնը:

Տիեզերքի մէջ ամէն ինչ օրէնք եւ սահմանուած մի կարգ ունի. առանց օրէնքի ոչինչ գոյութիւն չունի եւ ոչինչ չի կարող կատարուել — ահա՛ նրա ելակէտը:

Եթէ բնութեան չորս հակառակ տարրերը իրարու չեն զարնուում եւ աշխարհը կործանում — որովհետեւ օրէնք ունին եւ նրանցից ոչ մէկը չի շեղւում նախագծուած ճանապարհից: Եթէ գիշերը եւ ցերեկը միշտ եւ կանոնաւոր յաջորդում են իրար — որովհետեւ այդպէս է սահմանուած: Եթէ արեւը ամէն օր ծագում է եւ իր կենսատու ճառագայթները սփռում աշխարհի վրայ — որովհետեւ օրէնք ունի: Այսպէս անվերջ:

Մարդն է միայն, որ փոփոխական բնութիւն ունի եւ ըստ Շահամիրեանի՝ ձգտում է որեւէ օրէնքի հենթարկուել: Միեւնոյն մարդը իր կեանքի տարբեր շրջաններում տարբեր բնութիւն ունի. ծերութեան մէջ նա բոլորովին այն չէ, ինչ որ էր իր տղայութեան կամ երիտասարդութեան ժամանակ: Աւելին. իւրաքանչիւր օրը, ժամը, րոպէն, անգամ վայրկեանը փոխում են մարդուն. ինչ որ երէկ մեզ թւում էր գեղեցիկ ու լաւ, այսօր թւում է տըգեղ եւ վատ. երէկուան բարեկամը այսօր թշնամի է մեզ. այսօր այրում ենք, ինչ որ երէկ պաշտում էինք:

Իր այս փոփոխական բնութեան պատճառով՝ մարդն ընդունակ է ե՛ւ բարի, ե՛ւ չար գործելու: Հետեւապէս անհրաժեշտ է մէկ միջոց, որը մի կողմից՝ շղթայի պէս կապէր մարդու ձեռները եւ թոյլ չտար չար գործելու, իսկ միւս կողմից՝ խրախուսէր նրան՝ միշտ բարի գործելու:

Այդ փրկարար միջոցը — հեղինակի կարծիքով — օրէնքն է, կարգը, որից Հայաստանը, դժբախտաբար, միշտ զրկուած է եղել:

Հայ ժողովուրդը, իր բազմադարեան գո-